ԳԵՆԴԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ
ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐ

Տրանս անձանց իրավունքների ապահովման և հանրային կյանքի լիարժեք մասնակցության ապահովման համատեքստում անձնագրում գենդերային ինքնության նշման փոփոխության հնարավորությունը հստակ ձևակերպված և առաջնային կարիք է:

Անձի փաստաթղթերում գենդերային ինքնությանը չհամապատասխանող տվյալները կարող են խոչընդոտել նրա նույնականացումն ու ճանաչումը պետական մարմինների կողմից՝ հանգեցնելով հիմնարար իրավունքների իրացման սահմանափակման: Հաճախ խնդիրներ են առաջանում օրինակ՝ բանկային հաշիվ բացելիս, աշխատանքային իրավահարաբերություններին, ճամփորդելու և անձի ինքնության հաստատում պահանջող այն բազմաթիվ իրավիճակներում: Բացի այդ՝ տրանս անձանց գենդերի հաստատման պատշաճ գործընթացի ապահովումը բխում է նաև մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքից:

ՀՀ օրենսդրությունը չի կարգավորում գենդերի իրավական ճանաչման հարցերը: «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է միայն անձի անվան փոփոխություն, իսկ գենդերի կամ սեռի փոփոխությանն առնչվող կարգավորումները թերի են, չկան փաստաթղթերում գենդերի փոփոխության հստակ ընթացակարգեր:

Գործող պրակտիկայում գենդերի փոփոխության համար պահանջվում է բժշկական հաստատության և/կամ հոգեբուժական եզրակացություն, որը հաստատում է գենդերային դիսֆորիան և/կամ անհամապատասխանությունը (կախված դասակարգումից) կամ գենդերի ճանաչման անհրաժեշտությունը:

ԵՄ որոշ երկրներ որդեգրել են ինքնորոշման սկզբունքը՝ թույլ տալով անձին անխոչընդոտ փոխել իր գենդերի վերաբերյալ նշումը, իսկ Մալթայում, Դանիայում և Իռլանդիայում կիրառվում է ինքնորոշման սկզբունքը՝ առանց բժշկական կամ հոգեբուժական միջամտության պահանջի: Այս սկզբունքը թույլ է տալիս անձին փոխել գենդերի վերաբերյալ գրանցումը՝ առանց բժշկական միջամտությունների կամ փաստաթղթերի պահանջի:

Յոգյակարտայի սկզբունքները, ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի փաստաթղթերը նույնպես պաշտպանում են այս մոտեցումը:

ՄԻԵԴ-ը տրանս անձանց առողջապահական ծառայություններից զրկումը և գենդերի իրավական ճանաչման մերժումը դիտում է որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի՝ մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտում, հետևաբար պետության միջազգային պարտավորություններից է բխում խնդրի պատշաճ հասցեավորումը:

Անձի արժանապատվությունն ապահովելու նպատակով ինքնորոշման սկզբունքից և խտրականության բացառման շահից ելնելով՝ առաջարկվում է.

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքում (հոդված 66) կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ տալով անձին հնարավորություն՝ փոխելու իր գենդերի վերաբերյալ նշագրումը ՔԿԱԳ մարմնին ներկայացվող իր դիմումի հիման վրա՝ առանց իր գենդերային ինքնությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման պահանջի, այդ թվում՝ առանց բժշկական միջամտությունների և/կամ դրա փաստը հավաստող փաստաթղթերի (վիրահատություն, խորհրդատվություն, բուժում, թերապիա և այլն):